

«ԱՆՅՅԱԼԻ ՇՂԹԱՆԵՐԻՑ ՁԵՐԲԱԶԱՏՎԱԾ» ԹՐԲՈՒՆԻՆ ԵՒ ԻՐ ՎԵՊԸ

«Անոթարես» հրապարակչությունը, «Արգելված գրքեր» մաքրեմաշարով, լույս է ընծայել Էլիֆ Շաֆաթի «Սրամբուլի բիճը» վեպը (Երևան, 2012, թարգմանությունը՝ Արփի Աթաբեկյանի): Էլիֆը թուրք է ամերիկյան (ստեղծագործում է եւ թուրքերեն, եւ անգլերեն) ժամանակակից գրականության ամենահետաքրքիր հեղինակներից է: Նա ինչոր առումով քաղաքակրթությունների երկու բևեռների, հակադիր արժեհամակարգերի կրող է, ասես փորձում է համադրել անհամադրելի... Այս հարցում հավանաբար իր հերթին է թողել, Սրամբուլից գալիս, նաև ամերիկյան կրթությունը: Նա միջազգային հարաբերությունների ու քաղաքագիտության մագիստրոս է, մասնագիտացած Մերձավոր Արևելքի պատմության ինդիվիդուալ ոլորտում:

Ընդամենը 43-ամյա արձակագիրը գնահատականի ու պարզեցման, մրցանակների պակաս չունի, սակայն, ներկայացվող ստեղծագործության համար Շաֆաթը 2006-ին կանգնել է դարարանի առաջ՝ Նայեց Ցեղասպանության հարցը արծարծելու եւ այն իրբն իրողություն դիտարկելու մեղադրանքով:

Վեպը մարդկային ցեղի հիշողության մասին է, որը եթե մեր դեպքում ազգապահպանման կարևոր գործոն է դառնում, թրքերի համար անցյալի սարսափազդող սրվեր է, որից կամենան էլ, չեն կարողանում ձերբազարվել: «Նայերի ցանկությունն է, որ մեր կորուստն ու խոր ցավը ճանաչվի, - ասում է վեպի հայ հերոսներից մեկը, - Նորմալ մարդկային հարաբերությունների զարգացմանը սա պակասում է: Թուրքերին ասում ենք՝ րեսեք, մենք սգում ենք, գրեթե մեկ դար սգում ենք, որովհետև մեր սիրելիներին ենք կորցրել, մեր րներից ենք վռնդվել, մեր հողից ենք վտարվել, գրկվել ենք մեր ունեցվածքից, ...գառան պես մորթվել ենք: Մեր պապերի ու րարերի կրած չարչարանքները համակարգված ժխտելով մեզ ավելի մեծ ցավ են պատճառել... Ասա, րեսեն, եթե սա ասես, թուրքերն ինչպե՞ս կարձագանքեն: Բացասական»: Մակայն, պարզվում է թուրքի հերքնկերանալու ճանապարհ, հնարավորություն կա: Ընդամենը պեպր է կարողանալ նրանց չափ անստեղծալ ու մոռացկու լինել. «Քանի որ նրանք մոռանում են անցյալը, սպասում են, որ մենք էլ պիտի մոռանանք» (205): Մակայն, «անարդարությունը երբեք չի մոռացվում» (209):

Վեպի երկու՝ պարմանուռի հերոսները, որոնց ճանապարհները խաչվել են հանգամանքների՝ առաջին հայացքից պարահական բերումով, միանգամայն րարբեր իրականությունների արդյունք են: Արմանուշը ցեղասպանությունը վերապրած, Ամերիկայում հաստատված ընրանիքի գավակ է, որ չնայած օրարագգի մոր հանգամանքին՝ հավարարիմ է իր արմարներին, ընրանեկան ջերմ ու սիրառար հարաբերություններին, հայ-

կական մեծ ու համերաշխ գերդաստանի ավանդություններին. «Արմանուշը ծայրաստիճան հեզ աղջիկ էր» (193), ուսյալ ու գիտասէլ, գուսպ ու հավասարակշիռ է: Նրան հակառակ է, Քազանջը՝ միայն չորս սերնդի կանանցով համարված, ընտանիքի բոլոր անդամները «...ասես երգվյալ իռացիոնալ լինեին: ...Այս հարկի տակ խելքի ու բանականության հանդեպ անտարբերություն էր փրկում: ...Ամեն տեսակի հիմարություն սպասելի էր այս տանը» (78): Մի մեծ մայրիկ, որ թուրքի առանց այն էլ կորած հիշողությունն էր կորցրել ու ապրում էր աշխարհագրական անորոշ կողոպտանքներում, անորոշ ժամանակաշրջանում: Գլուխում մայրիկ, որի «հայացքում խստություն, դեմքին՝ կոպտություն կար»: Դուստրերը համոզված էին, որ իրենց մայրը նախկին կյանքում Իվան Ահեղն է եղել (28), Ներիդե մորաքույրը, որ սպեղծագործող կին էր, կոլաժ-կին (243), էլի մի քանի մորաքույրեր՝ ցնորված ու ցնորամիտ, կատարյալ անմեղսունակ կանանց մի խումբ, որոնցից բնությունն ասես վրեժ էր լուծել իրենց ցեղի գործած անմարդկային մեղքերի համար: Այս ընտանիքում էր ծնվել ու ապրում Արմանուշի սերնդակից անհայր Ասյան. «Ի վերջո, անհայր երեխան բիճ էր, և Սրամբուլում բիճը նման է շարժվող աքամի՝ ամեն պահի պարբասսը ընկնելու» (17):

Արմարների կանչին հավաքարիմ, հայ պարմության մասունքների երելից Արմանուշը Սրամբուլ էր եկել և իջևանել իր խորթ թուրք հոր՝ Քազանջը փարօրինակ ընտանիքում: Թեև սիրող հորաքույրերն ամեն ինչ արել էին, որ Ամերիկայում Արմանուշն իր հասակակիցներից չտարբերվի, միևնույնն է, ջանքերն ապարդյուն էին եղել. «Անցյալում կորուստներ ունեցածների համար երևակայությունը թունավոր հեղուկ է, աննկատ փարածվում է արյան մեջ, խոջընդափում ապագայի և ներկայի վրա կենտրոնանալուն: ...Նրանք, ում ձեռքից խլել են ինքնությունը, հանգիստ չեն կարող լքել իրենց արմարները: Սփյուռքում հայ լինել, նշանակում է ողջ մնացածների թոռ լինել: Եթե որպես ողջերի երեխա ցանկանում ես կարդալ, մտածել, գրել և երագել, պետք է անես անձայն: Նման ընտանեկան ժառանգություն ունեցողը պետք է ոչ թե փախչի, այլ սովորական դառնա: Այդպես էր սովորել Արմանուշը Չաքմաքչյաններից, բայց ահա սովորածներից ոչ մեկը չէր կարողանում կիրառել» (115-116):

Արմանուշի, ինչպես և մնացած բոլորիս, ողևորություն-ուխարագնացությունը դեպի պարմական հայրենիք թուրքերն ընկալում են ճիշտ թրթալարի. «Լսել եմ, որ հայերը վերադառնում են՝ փառիներ առաջ իրենց փախած պապերի թաքցրած սնդուկները գտնելու...» (179): Երբ հողը բռնել է, այն խլել, գավթել, բռնակցել, կամ «նեղճակար կինություն» նկնել ու դավադիր ձեռքով սրացել ես իբրեւ պարզել, իբրեւ առնավարչյա ապագա խժոժությունների, երբեք չես կարող ընկալել որպես հայրենիք: Այն քեզ ոչ սնում է, ոչ ջերմացնում: Խլված հողում չկա անցյալ, չկան անցյալի մասունքներ ու խնկելի հիշատակներ: Թուրքի հայրենիքը մնացել է հեռու հեռվում, չկանչող, անմասունք, անխոնկ, անհրապույր, գուր իբրեւ բռնեխների ծնավայր... Ի դեպ, իբրեւ գուգահեռ պարկեր մտաբերեցի ԺԹ. հարյուրամյակի հնագիտական ուսումնասիրություններ կարարողներին (Օսթին Նևերի Լեյարդ, Էմիլ Բուրպա, Նևերի Շլիման և այլք), որոնք ինքնամոռաց նվիրումով պեղում էին Օսմանյան Թուրքիայի փարածքում (հակառակի պես համաշ-

խարհային պարմության բազում փառահեղ հուշարձաններ կերպվել են բաղաբաղաբարությունների այս խաչմերուկում): Նրանք անդադար հալածվել են թուրք կուսակալների կողմից, որոնք համոզված էին, որ երապացիները գանձեր են որոնում, ընդամենը գանձ, այլ հանգամանք ընկալել պարզապես անկարող էին...

Արմանուշը եկել էր պարմական ճշմարտության և ճշմարիտ պարմության երկրից, իր մեծ պապի, բանաստեղծ պապի մասին լսածը «շռափելու» և արևմտյան էր եկել: Պարերագմը Նովհաննես Իստանբուլյանի գործը չէր, ինչպես նաև ծանր ֆիզիկական աշխատանքը: Նա սիրահարված էր բանաստեղծությանը...

«Բայց ցավոք սրտի, նրա անունը ցուցակում է եղել, - ասաց Արմանուշը, - մահվան դարապարոված հայ մարավորականների ցուցակում: Քաղաքական պարագլուխներ, բանաստեղծներ, գրողներ, լրագրողներ, հոգևորականներ... ընդհանուրը՝ 234 մարդ: 1915 թ. ապրիլի 24-ի ուրբաթ երեկոյան Ստամբուլում հայերին ձերբակալելով՝ հոգ են տարել նրանց անվտանգության մասին: Բոլորն այդ օրը տնական էին հագել, ասես ինչ-որ արարողության էին գնում: Ճեփ-ճեփմակ օձիքներով նրբագեղ հագուստներ: Բոլորն էլ՝ գրագետ մարդիկ: Որոշ ժամանակ առանց որևէ բացատրության, անվտանգության պարզակալով, նրանց ձերբակալեցին, ապա աքսորեցին կամ Այաշ, կամ Չանդըրը: Առաջին խմբի մարդիկ երկրորդից ավելի անավոր պայմաններում էին: Այաշում ոչ ոք ողջ չի մնացել: Չանդըրը արքայապետներն էլ սպանվել են: Պապիկս այդ խմբում էր... Լեզենդար երաժիշտ Կոմիտասը տեսածների պարճառով խելագարվել է...» (108-181): Նայուհու շուրթերով մանրամասն նկարագրվում են 1915-ի վայրագությունները, ծերերի, երեխաների, կանանց կրած փառապանքները. «Ովքե՛ր են արել, - հարցնում են Քազանջը կանայք:

- Թուրքերն են արել, - ասաց Արմանուշը՝ առանց իր խոսքերի հեղուկանքների մասին մտածելու:

- Ամոթ է, մեղք է, դրանք մարդիկ չե՛ն, - ասաց Ֆերիդե մորաքույրը:

- Իհարկե, որոշ մարդիկ հրեշից չեն փառքերվում, - ասաց Ջուրիյե մորաքույրը: Քսան փառի պարմության ուսուցչուհի էր եղել, և նրա համար այնքան սովորական էր անցյալը ներկայից կոնկրետ սահմանագրելը, Օսմանյան կայսրությունը ժամանակակից Թուրքիայի հանրապետությունից կտրուկ առանձնացնելը, որ այս ամենը լսում էր որպես մի այլ երկրում տեղի ունեցած՝ խղճահարություն առաջացնող իրադարձություն: Նոր թուրքական պետությունը ստեղծվել է 1923-ին. այս իշխանության թվարկությունը դա է: Դրանից առաջ տեղի ունեցածը այլ շրջանի, այլ երկրի, կարճ ասած՝ ուրիշների խնդիրն է» (183):

Արմանուշը հեղուկ հասկացավ, որ սպասում է ներողության, բայց դա չէր նշանակում, որ նրանք մեղքն ընդունում էին: Թուրքերն են, որ այս ամենն արել են հայերի հանդեպ 1915-ին: Ինքը հայ է, նրանք էլ, եթե թուրք են, արդյո՞ք չպետք է ներողություն խնդրեն... Խնդիրն այն չէր, որ ցավը չէին կիսում, ընդհակառակը՝ կիսում էին: Խնդիրն այն էր, որ համոզված էին, թե իրենց և անցյալում մեղք գործածների միջև ոչ մի կապ չկար... Նայերն ու թուրքերը հավանաբար ապրում են փառքեր ժամանակային գոյությունում: Նայերի

համար ժամանակը մի շրջան է. անցյալի՝ ներկայում նորից ծնվելու, ներկայի՝ ապագա ծնելու մի շրջան: Նավահաբար, թուրքերի համար ժամանակը շարք տեղերում բաժանված, կտրված գծի է նման. անցյալը որոշակի մի կետում ավարտվում է, այժմ գրոյից է սկսվել: «Թուրքերի անցյալի և ներկայի միջև մասնավորապես լից բացի այլ բան չկա» (184): Շարք «հեշտ», «պրամաբանական», «հիմնավորված» հայացք է պարմության նկատմամբ՝ ոճագործությունն արեցիր, կորիք թելը, պարասխանավորությունը թող անցյալում, սկսիր նոր շրջան, որն անպայմանորեն «կնշանավորվի» մեկ այլ բարբարոսությամբ ու դարձյալ՝ կորիք թելը, գնա առաջ. արյունաշար սուլթանները արեցին սև գործը, էջը փակված է, պարասխանավորներ չկան, հետո 1915, 1918, 1920, ... պարասխանավորներ նորից չկան, հետո Նրանուր Դինը, հետո... Եւ որքա՛ն կարելի է կորսել պարմության ժապավենը, թե՛ր, անպրամաբանական ընթացք... Եւ հարցը, որ տասնամյակներ շարունակ ուղղում ենք համաշխարհային հանրությանը, այդպես էլ գրեթե անպարասխան, անարձագանք է մնում, ու դա է պարծառը, որ կրկնվում է. որքա՛ն կարող է յաթաղանը պարմության ընթացքի միակ վճռորոշ գործուն լինել: Թուրք պարմանուհին դիմում է Արմանուշին. «Ես հարգում եմ հուշերը կենդանի պահելու ձեր ցանկությունը, որպեսզի ձեր պապերի ողբերգությունը չմոռացվի: Բայց մեր ճանապարհները հենց այսպեղ բաժանվում են: Քոնք հուշերի ճամփորդությունն է, հիշողության բացարձակացում: Իսկ ինչ վերաբերում է ինձ, ապա ես կնախընտրեի Մեծ Տաքիկիս նման լինել. երանի ոչինչ չհիշեի...» (199):

Թրքուհի Ասյան խոստովանում է, որ անցյալը չի արհամարհում, պարզապես դրա մասին չգիտե ոչինչ. «Իմ կարծիքով՝ անցյալի դեպքերի մասին խմանալը ոչինչ չիմանալուց լավ է... Գիտեմ, որ անցյալիս մասին ունեցած տեղեկություններս սխալ են, բայց չգիտեմ, թե ինչն է սխալ: Ինձ համար պարմությունը հիմա է սկսվում: Ժամանակի մեջ տեսականություն չկա» (200): Իսկ ո՞վ է ժամանակը գրկում տեսականությունից: Անհասկանալի է: Պարասխան չկա: «Թուրքերի աչքում անցյալն այլ աշխարհ է» (203), որ ի տարբերություն հայ մայրերի, թրքուհիների «աչքի մշուշում» տեսանելի չէ:

Արմանուշն ու Ասյան հաճախ են քննարկում-գրոցում-բանավիճում ցավոք հարցի շուրջ ու կարողանում են այդ բարդ գործն անել փոխհարգանքով ու հանդուրժողաբար. «Շարք տեղերի ընտանիքիդ համար, ցավում եմ, - ասում է թուրք պարմանուհին, - բայց այդ ժամանակ պարերագմ էր: Երկու կողմում էլ գոհեր են եղել: Գիտե՞ս հայ ապստամբները քանի թուրք են սպանել: Իսկ դատություն կրած թուրք ընտանիքների մասին ինչ կասես...» (231): Շարք կարևոր դրվագ է վեպից, որով պարզ է դառնում, որ թուրքերը անցյալի հետ կապը բոլորովին էլ չեն կորցրել, կորցրել են ամոթի զգացումն ու անամոթաբար սպում են, խեղաթյուրում, սաղորում: Իսկ հենց նեղն են ընկնում՝ «թելը» կտրվում է, պարասխանավորությունն էլ ընկնում է Թուրքիայի «աշխարհիկացումից» առաջ... Եւ հաճախ իրենց մեթոդները վերագրում են մեզ. «Նայերի պնդումները հիմնված են չափազանցության ու խեղաթյուրումների վրա» (232): Իսկ երապացի ակնապրեսների սահմնկեցնող վկայությունների հետ ինչպե՞ս վարվենք, ի՞նչ պիտակավորում տանք...

«Անցյալը շղթա է, որից պետք է ազատվենք: Մարդուն ճնշող հարկ, - ասաց Ասյան:

- Բոլորն անցյալի կարիք ունեն, - հակառակվում է Նարբեցող Ծաղրանկարիչը» (167): Այ, հենց այսպիսի է թուրքի չափացող ցավը: Կամենում են բոլորի պես անցյալ ունենալ, «անցյալի կարիք» ունեն, բայց ներկայանալի անցյալ չունեն ու չարանում են հիշելու բան ունեցողի դեմ, չարանում են հիշողություն ունեցողի դեմ: Չարանում են: Ակնհայտ է, թուրքը խնդիր ունի: Ինքն իր հետ, իր ներսում խնդիր ունի: Դա լավ է հասկանում Շաֆաքն ու կարողանում է ուժ գտնել այդ ցավի մասին խոսելու. «Ջելիհան անընդհատ հայտնում էր... այս փորձանք Կոստանդնուպոլիս քաղաքը գրավողին և դարերով իր սխալը չշարժած ամբողջ օսմանյան փոփոխ...» (5): Կոստանդնուպոլիս, որ Սյրամբուլ հորջորջվեց, որը «...բնավ էլ քաղաք չէ: Քաղաքի նման է երևում, բայց դա պարզապես է: Իրականում քաղաք նալ է: Բոլորս մի նալի մեջ ենք ապրում: Բյուզանդացիները գնում են, օսմանցիներն են գալիս, հրեաները գնում են, ռուսներն են գալիս...» (190):

Կամ ԻԱ. հարյուրամյակի ու ժամանակակից կյանքի հետ ինչ ցավալի բախում-հակադրություն. «Այդ պահին, նույն հրամանը կարարելու պես, մզկիթի էգանը լցվեց սենյակ: ...Ջելիհայի դեմքը խոժոռվեց: Միշտ արել է մարդկային ձայնի պարզունակությամբ արարելովով էգանը, որ բարձրախոսերով քաղաքի վրա մռնչալով վերածվում էր էլեկտրո-աղմուկի» (22):

Կամ ինչ փառապանքի հերետաքով պետք է ծնվի այս խոսքովանությունը. «Արևմտյանքիներն էլ կարծում են, թե Արևելքի և Արևմտյանքի քաղաքակրթությունների միջև մշակութային անդունդ կա: Երանի այդքան հեշտ լինել: Քաղաքակրթության իրական անդունդը թուրքերի ու թուրքերի միջև է... Շուրջբոլորը քյաթթուներ ու գեղցիներ և գյուղացիներ են... Մի բոռ մշակութային, քաղաքաբնակ հին հարեալների ենք կարծում: Սյրամբուլի հայերին, հույներին, հրեաներին...», - «Կաֆե Կունդերայի» բռնեմն է խոսում (97):

Սրելոճագործող, քաղաքակիրթ միջավայրի համն ու հոպն առած մարդու ինչ փազնապանքի արդյունքում պետք է գրվեին այս փողերը. «Մենք ի՞նչ ենք, գիտե՞ք: Այս աշխարհի թարախը: Խեղճ, թաց, հոպած թարախ, ընդամենը» (99): Նավանաբար այս ինքնախոսքովանություններն են ստիպել “New York Times”-ի վերլուծաբան Լորենյն Ադամսին եզրակացնելու. «Ակնհայտ է, որ թուրք վիպագիր Շաֆաքն իր հայրենիքում նեխահոյ է զգացել»:

Ափսոս, որ սթափ ինքնագնահատականի փորձերը՝ պարճառահերետաքային կապը կորցնելու պարճառով, շար հաճախ ձախողվում ու ընդհուպ գավելալանի, անարամաբանականի գիրկն են նետում վիպասանուհուն. «Մեր խնդիրն անընդհատ սխալ հասկացվել է: Արևմտյանքի մարդիկ կարծում են՝ թուրքերն արաբներին են նման: Ինչո՞ւ որովհետև մեզ չենք ներկայացնում...»

Ցավոք սրտի, թուրքերից առաջ ԱՄՆ գնացած հույների և հայերի պարճառով ամերիկացիների ուղեղը լվացված է, թուրքերին համարում են «Կեսգիշերային ճեպընթաց» (154):

Նախ, թուրքը պետք է երազի արաբների՝ միջնադարում արաբած մշակութային ժառանգության պես զանճարան ունենալու մասին: Այլ կերպ ասած, շար ցանկալի կլիներ,

Եթե շփոթեին... բայց չեն շփոթում՝ արաբն արաբ է, թուրքը՝ թուրք, ու դա բոլորն են զանազանում: Ինչ մնում է «Կեսգիշերային ճեպընթացին», ապա թուրքը ամեն ինչ արեց, որ իր կերպարը դրա հետ համընկնի, ասացավ: Նայ ու հրեայի շուր կամ ուշ հասնելը ԱՄՆ... պարզունակ է, առնվազն՝ պարզունակ:

Ընդհանրական մեծագույն գաղտնիքը, թե ով է եղել Ասյայի հայրը, վեպի հենց սկզբից Քազանցիների լուռ, չբնութագրվող մրահոգություններից, մեծ հոգսերից մեկն է, որը հայ ընթերցողին հագիլ թե հեղափոխի՝ «գլուխը քարը» մեզ ինչ հեղափոխի: Սակայն, հենց դա մեծ հանգուցալուծման ու մեզ համար գուցակշիռի պայման կարող է դառնալ: Յնթրված մորաքույրներից մեկը՝ Կիեզերական, իսկ ավելի շուր անմաքուր ուժերի աջակցությամբ կարողանում է գուշակել, գրել Կարիներ շարունակ իրենց Կանաչի հարցի պարասխանը: Իսկ պարասխանը զարհուրելի էր. ընդհանրիկ միակ Կանաչի պայմանում հասարակված միակ եղբայրը արևապիղծ էր... Եւ դար ու դարաստանի, բնութագրման ու պարզաբանումների կարիք չկար, ուստի է հարուցել չքավվող մեղքի համար: Քրոջ մարտուցած օշարակը պարիթեզներից «ամենաբաղցրն» էր... Եւ արևապիղծը հանդարտ, լուռ, ըմբռնումով ընդունում է այն, համոզված, որ ցանկացած վար արարք պարիթեզ է, իսկ հարուցումը՝ անխուսափելի: Գուցե սա ամեն թուրքի ենթագիտակցության մեջ նստած սարսափ է, որի մասին բարձրաձայնում է Էլիֆ Շաֆաբը: Գուցե համոզմունք է, որ գալու է պարիթեզ ժամանակը, եւ այն ընդունելու են անձայն, լուռ, հնազանդված:

Շաֆաբը գրում է. «Ինչ էլ անես, մարդ չի կարողանում ազատվել անհարույց անարդարությունը դարապարկված լինելու զգացումից» (13): Հարուցում ասվածը մի բան է, ոճիրն ու մեղքը հասկանալ-ընդունելը՝ բոլորովին այլ: Մենք ու քաղաքակիրթ մարդկությունը պահանջում ենք երկրորդը: Ընդամենը, ո՛չ ավելին: Իսկ հարուցում... դրան հարուցում չկա: Ինչո՞վ, ինչպե՞ս պեք է հարուցեն մեր հանճարների կորստի դիմաց, ինչպե՞ս պեք է հարուցեն հեղված անմեղ արյան, կործանված ու կորսված, խեղված ճակարագրերի, չծնված երեխաների, պղծված-խոնարհված եկեղեցիների դիմաց: Ինչպե՞ս: Չափման միավոր կա՞: Ինչպե՞ս չափենք անչափելին...

ԱՆԻ ԽՈՒՂԱՎԵՐԴՅԱՆ